դ) հարմոնիկ ձայնակարգը՝ A – d.

fis¹ – g¹ – [A¹] – b¹ – cis² – (d²)

(տե՛ս «Միայն սուրբ»[29]) եւ այլն:

3. Այտընեանի ձայնագրած պատարագեան մեղեդիները ծաւալւում են հայ աւանդական եկեղեցական երաժշտութեանը յատուկ մեղեդիական ոճերով՝

ա) վանկային (վանկին համապատասխանում է մէկ հնչիւն).

Նոտային օրինակ 5 [30]



բ) ներվանկային (վանկը եղանակաւորւում է 2-5 հնչիւններից բաղկացած ոչ ծաւալուն մեղեդիական ֆրազով), (տե՛ս նոտային օրինակ 3ա-ն),

գ) խառը՝ վանկային-ներվանկային (երգի ընթացքում զուգորդւում են վանկային եւ ներվանկային մեղեդիական ոճերը), (տե՛ս նոտային օրինակ 2ա-ն),

դ) զարդոլորուն (վանկը եղանակաւորւում է ծաւալուն մեղեդիական ֆրազով).

Նոտային օրինակ 6 [31]



4. Նշելի է նաեւ, Այտընեանի ձայնագրութիւններում առկայ հայ եկեղեցական, մասնաւորապէս՝ զարդոլորուն երգերին յատուկ տաղաչափական սկզբունքներից մէկը. երգի սկզբում, բանաստեղծական տեքստի առաջին երկու վանկերի եղանակաւորումը մեծավերջ (յամբական) ոտքի միջոցով՝ կարճ եւ երկար վանկերի յաջորդականութեամբ, ըստ կուանտիտատիւ տաղաչափութեան, եւ ապա յաջորդ վանկերի ազատ, անկաշկանդ, լայնաշունչ եղանակաւորումը[32] (տե՛ս նոտային օրինակ 4ա-ն):

Այտընեան-Բէօմի բազմաձայն Պատարագը հայ հոգեւոր կանտատային-օրատորիալ ժանրի առաջնեակներից է եւ դրանով արդէն իսկ «ապահովել է» իր տեղը հայ երաժշտութեան պատմութեան մէջ: Միաժամանակ այս Պատարագը, ճիշտ է, արդէն կորցրել է իր ծիսական գործառոյթը, այսպէս ասած, «խոնարհուել է», բայց այդուհանդերձ գեղարուեստական որոշ արժէք ունի եւ կարող է, թէկուզ հատուածաբար, կատարուել համերգներում:

29 Նոյն տեղում, էջ 84:

30 Նոյն տեղում, էջ 30:

31 Նոյն տեղում, էջ 34:

32 Այս դիտարկումը մեզ յուշել է երաժշտագէտ Կ. Խուդաբաշեանը:

ԽՐԱՏՆԵՐԸ ՊՍԱԿԻ ԿԱՐԳՈՒՄ

Անահիտ Մխիթարեան

Խրատները ժամանակի պատմութեան, ժողովրդի կենցաղի ու սովորոյթների, ազգային հոգեբանութեան ու աշխարհագային հոգեբանութեան են[1], որոնք իրենց յեացքի դրսեւորումն են, որոնք իրենց մէջ ներառում են տարբեր հարցեր՝ ե՛ւ խորհուրդ, ե՛ւ հրաման-պարտադրանք, ե՛ւ ուսուցանելու ու դաստիարակելու միջոց: Երբեմն խրատները, դառնալով պատուիրան, օրէնքի ուժ են ստանում:

«Խրատը, իբրեւ անհատի եւ հասարակութեան բարոյական դաստիարակութեան գաղափարներ ունեցող ...խրատների համար աղբիւր են հանդիսացել ե՛ւ Աստուածաշունչը, ե՛ւ Կանոնագիրքը, ե՛ւ սրբերի ու ժամանակակից վարդապետների երկերն ու ասոյթները, ե՛ւ իրական կեանքից անհատի ու սերունդների ստացած փորձը»[2]:

Միջնադարում խրատը չի առանձնացել որպէս ժանր. այն մտել է առակի ժանրի մէջ եւ կոչուել է «Թուղթս խրատարի մէջ եւ կոչուել է «Թուղթս խրատարի մէջ եւ կոչուել է «Բաղանս»[3], «Խօսք իմաստասիրաց» եւ «Բարուախօս»[4] կամ պարզապէս՝ Ճառ, Ճառք: Մեզ հասած ամենավաղ գրաւոր նմանատիպ յիշատակութիւնը Գրիգոր Լուսաւորտիպ յիշատակութիւնը Գրիգոր Լուսաւորտիպ յիշատակութիւնը չի (238-325/26 թթ.) «Ցանախապատում ճառերն» են, որոնք հոգեւոր խրատներ են:

1. Հայ մատենագրութեան մէջ առաջին խրատական գործերի հանդիպում ենք Ե. դարից սկսած: Մեզ յայտնի են Եղիշէի «Բան խրատու յաղագս միանձանց»-ը, Յովհան Մանդակունու ճառերը (Վասն սիրոյ եւ մախանաց եւ նախանձու, Թուղթ վասն կնաթողաց, Վասն սիրոյ)՝ որպէս հոգեւոր խրատներ:

Հայ մատենագրութեան մէջ ամենավաղ յիշատակուած կանոններում իսկ նկատելի են խրատները, որոնք կարելի է համարել կանոնների նախահիմքը, քանի որ կանոններում պատիժը կապւում է խրատի, ապաշխարութեան կրօնական գաղափարի հետ: Կարծում ենք, որ նրանց հիման վրայ էլ աստիճանաբար ձեւաւորուել են կանոնները եւ երբեմն դրանք համարուել են կանոնախրատական երկեր:

Դեռեւս Ե. դարից մեզ յայտնի են կանոնական խրատներ, ինչպէս օրինակ՝ Սահակ Պարթեւի անունով յայտնի կանոնները, որոնք ունեն խրատական բնոյթ.

...Եւ դուք քահանայք, տղայոց ամենեւին իսկ պսակ մի՛ աւրինէք մինչեւ ի կատարումն հասակի: Իսկ կատարելոցն որոց զմիմեանս ոչ իցէ տեսեալ ի հաճոյս ինքեան, պսակ մի՛ իշխէք դնել առանց քննութեան ...[5]:

Միջնադարում խրատները տարբեր խմբերի են բաժանուել՝ ըստ իրենց բովանդակութեան: Երբեմն էլ խրատական բովանդակութիւն ունեցող ճառերն ու քարոզները, խրատական ու շրջաբերական թղթերն ու նամակներն են դիտուել իբրեւ խրատական գործեր, որոնք էլ յետագայում՝ ԺԲ.-ԺԳ. դարերում ոչ միայն իրենց

1 Խրատական ժանրի գլուխգործոցներն են Խիկարի և Նուշիրուանի անունով պահպանուած երկերի և Նուշիրուանի անունով պահպանուած երկերը, մասամբ էլ՝ «Պղնձէ քաղաքի պատմութիւնն» ու այլ ժողովածուներ:

2 Է. Մ. Բաղդասարեան, *Յովհաննէս Երզնկացին և նրա խրատական արձակը*, Եր., 1977, էջ 40:

3 Տե՛ս Հ. Յակոբոս Տաշեան, *Ժողովածոյք առակաց Վարդանայ, ըստ Ն. Մառի. տեղեկատուութիւն եւ քաղուածքներ*, Վիեննա, 1900, էջ 16:

4 Նոյն տեղում, էջ 78:

5 *Կանոնագիրք Հայոց*, հտ. Ա, աշխ.՝ Վ. Յակոբեան, Եր., 1964, էջ 382:

© National Library of Armenia

բովանդակութեամբ, այլեւ կիրառական նշանակութեամբ ստացել են կանոնական բնոյթ եւ առանձնացել են որպէս ինքնուրոյն միաւորներ: Այդպիսին է նաեւ Ներսէս Շնորհալու «Թուղթ ընդհանրականը», որտեղ հեղինակը փորձել է կանոնական խրատների միջոցով կանոնաւորել հասարակութեան ներքին կեանքը, յարաբերութիւնները, ժողովրդի կենցաղի ու բարքերի մաքրութեան ապահովումը.

Մի՛ ոք ի ձէնջ գաղտ պսակ դիցէ ումեք, այլ եթէ ծնօղս ունիցի եւ միաբան իցէ եւ ոչ բաժանեալ, գիտութեամբ եւ կամաւ նոցին եղիցի: Իսկ եթէ ոչ ընդ ծնողօք՝ հասարակաց տեսութեամբ յայտնի դիցի պսակն, զի վկայեսցի յամենեցունց, թէ ուղիղ է եւ ոչ ընդդէմ օրինացն Աստուծոյ, որով եւ երգոցն ձայնք եւ նուագարանացն զնոյն նշանակեն, իբրեւ թէ վկայս պսակելոցն զամենեցունց լսելիս եւ զտեսանելիս կացուցանելով[6]:

Ճիշտ է, ժողովուրդը երբեմն, հին սովորութեան համաձայն, շարունակում էր ամուսնանալ առանց եկեղեցու օրհնութեան, բայց քանի որ միջնադարում ամուսնութիւնը տնօրինողը եկեղեցին էր, ուստի եկեղեցու հայրերը, յայտնելով իրենց անհանգստութիւնը, ասում էին. «Մեր մէջ ծածուկ պսակները վտանգի են ենթարկւում դատուելու շնութեան եւ անառակութեան հետ հաւասար»[7]: Եւ քրիստոնեաներին խրատում էին, «որ առաջուց քահանաներին կանչեն եւ նրանց աղօթքով ու օրհնութեամբ հաստատեն ամուսնական համաձայնութիւնը»[8]:

Ներսէս Շնորհալու խրատների միջոցով իմանում ենք նաեւ տուեալ հասարակութեան ամուսնա-ընտանեկան յարաբերութիւնները, բարքերն ու սովորոյթները, որպիսիք են՝

ա. Կնաթողաց արանց եւ այրաթողաց կանանց առանց կանոնական հրամանին մի՛ դիցէ ոք պսակ, զի մի՛ լուծջիք դուք ի քահանայական կարգէ ըստ կանոնաց, եւ եդեալ պսակն՝ քակտեսցի, եւ եթէ բռնանան ոչ բաժանին՝ ընդ պոռնիկս համարեալ լիցին:

բ. Մի՛ եւ այնոցիկ, որք առեւանգս ասին, դնիցէ պսակս, զի հակառակ օրինաց Աստուծոյ...

գ. Մի՛ ոք ի քահանայից ի բռնութենէ բռնաւորաց առանց կամաց առնն եւ կնոջն պսակ դիցէ, որպէս լսեմք ի կողմանս Հայաստանեայց լինել, որ ընդ իշխանութեամբ այլազգեաց են:

դ. Մի՛ ոք համազգեաց, որոց արեան մերձաւորութիւն իցէ, պսակ օրինութեան դիցէ, այլ մինչեւ ի յերկուց կողմանցն զչորրորդ ազգին գլխաւորութիւնն կատարեալ ունիցին[9]:

Այս խրատական պատուիրանները յատուկ են եղել բոլոր ժամանակներին:

ԺԳ. դարի մատենագիր Յովհաննէս Երզնկացին նոյնպէս ունի ժողովրդական կենցաղի, բարքերի ու սովորոյթների վերաբերեալ խրատական ուշագրաւ գործեր: Դրանցից է նրա «Խրատ հասարակաց»-ը[10], որտեղ արծարծւում են նաեւ ամուսնա-ընտանեկան խնդիրներ:

Բարոյական ամուր ընտանիք ստեղծելու համար Երզնկացին առաջարկում է, որ ամուսնութիւնը հիմնուած լինի փոխադարձ սիրոյ վրայ: Նա գտնում է, որ ամուսնացողները նախօրօք պէտք է իրար տեսնեն ու հաւանեն, ուստի նա խրատում է հոգեւորականներին ու ծնողներին՝ արգելելով բռնի ամուսնութիւնը:

6 Ներսէս Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, աշխ.՝ Է. Մ. Բաղդասարեանի, Եր., 1995, էջ 132:

7 Վ. Մելիք-Թանգեանց, *Հայոց եկեղեցական իրաւունքը*, Թեհրան, 2004, էջ 905:

8 Նոյն տեղում:

9 Ներսէս Շնորհալի, *Թուղթ ընդհանրական*, էջ 133-134:

10 Է. Մ. Բաղդասարեան, *Յովհաննէս Երզնկացին և նրա խրատական արձակը*, էջ 139:

Միջնադարում բազմիցս գրուել եւ մերժուել է անչափահասների ամուսնութիւնը, քանի որ անչափահաս, չհասունացած երեխաների ամուսնութիւնը կարող էր պատճառ դառնալ հոգեւոր եւ ֆիզիկական այլանդակութիւնների:

Ինչպէս Գրիգոր Տաթեւացին է գրում. «...որպէս ծառն զի նախ ծաղկի եւ ապա պտղաբերի, զի ծառն ծաղկով զարդարեալ է...»[11], այսինքն՝ ծառը մինչեւ չծաղկի, չի բեղմնաւորի, պտուղ չի տայ, այնպէս էլ մարդը՝ որպէս միկրոաշխարհ, տիեզերական կառուցուածքի մի մասնիկ, պէտք է նախ հասունանայ թէ՛ հոգով եւ թէ՛ մարմնով, ապա պատրաստ լինի ամուսնութեան եւ պտղաբերութեան:

Յովհաննէս Երզնկացու առաջարկով տղայի ամենափոքր տարիքը պէտք է լինի 15-ը, իսկ աղջկանը՝ 14-ը, երբեմն նաեւ (ըստ պայմանների)՝ 12-ը[12]:

Յովհաննէս Երզնկացու՝ ամուսնացողներին ուղղուած խրատը եղել է նաեւ կանոն: Երբեմն կանոնի ու խրատի սահմանները խառնւում են, եւ դժուար է լինում զատել:

Ահա մի օրինակ, որտեղ խրատը վերածւում է կանոնի.

... Եւ թէ քանի մեծ մեղք եւ չարիք է լինիլ յայն մէջն, որ զփոքր աղջիկն պսակեն, զայն ոչ կարեմ գրել ի գրի աստ: Վասն որոյ թողէ՛ք զչար սովորութիւն (խրատ):

... Զի եւ սուրբ հայրապետն Հայոց Սահակ կանոնեալ է. «Տղայոցն հասակաւ պսակ մի՛ դիցեն քահանայք» (կանոն)[13]:

Խրատները երբեմն դառնում են կանոններ կամ կանոնական խրատներ, որոնք

Ե՛ւ ուսուցողական, ե՛ւ բարոյախրատական, ե՛ւ մեկնողական բնոյթ ունեն.

Ե՛ւ այր, ե՛ւ կին, որ մինն եղբօր դուստր լինին եւ միւսն եղբօր որդի, մի՛ տալ իրերաց եւ մի՛ պսակել, նոյնպէս զքրոջ ծնունդն: Եւ ի ժամ պսակի երէցն յեկեղեցին մի՛ թողցէ զկերեալսն եւ զարբեալսն եւ զանառակ կանայսն: Եւ զպսակն առաւաւտէն մինչեւ ի ճաշք արասցեն անօթի եւ յետ պսակին պատարագ արասցեն եւ հաղորդեն զփեսայն եւ զհարսն եւ յետ պսակին Ը. օր սուրբ կենան[14]:

Ինչպէս Յովհաննէս Երզնկացին, այնպէս էլ միջնադարեան շատ մատենագիրներ ու հոգեւորականներ գտնում էին, որ բարոյական ընտանիքի ամրապնդման համար պէտք է խորհուրդներ տալ, խրատել երիտասարդ ամուսնական զոյգին: Արգելում եւ քննադատաբար էին խօսում այն «անառակ» սովորոյթների մասին, որոնք անյարիր էին եւ դէմ էին քրիստոնէական բարքերին: Խրատելով առաքինի ու բարոյական կեանքով ապրել՝ նրանք բացատրում էին ամուսնութեան իմաստն ու նպատակը. ընտանիքը պէտք է լինի ամուր ու հաստատուն, իսկ ամուսինները՝ սիրով ու անդաւաճան:

Միջնադարեան նմանատիպ քարոզները կամ առակաւոր ճառերը դարերից եկած անժամանակ բանաւոր խրատներ են, որոնք հանդէս են գալիս գրական տարբեր ժանրերում:

2. Գուցէ այս խրատներն էլ հէնց հիմք են հանդիսացել միջնադարում ստեղծուած շատ քարոզների, ճառերի ու կանոնների եւ տեղ են գտել նաեւ եկեղեցական ծիսարանում՝ Մաշտոցներում:

Նոյնպիսի բարոյախրատական մեկնաբանութիւնների հանդիպում ենք Մաշտոցներում:

11 Գրիգոր Տաթեւացի, *Գիրք հարցմանց*, Երուսաղէմ, 1993, էջ 609:

12 Է. Մ. Բաղդասարեան, *Յովհաննէս Երզնկացին և նրա խրատական արձակը*, էջ 154:

13 Նոյն տեղում, էջ 155:

14 ՄՄ, ձեռ. թիւ 5894, Կանոնգիրք, 1664 թ., Ղրիմ, էջ 289բ:

© National Library of Armenia

Ահա դրանցից մէկը, որը կոչւում է «Խրատ վասն պսակին».

... Զի այսպէս առաքեալն Քրիստոսի Պետրոս աւրինադրէ արանց՝ իմաստութեամբ պահել զկանայս իւրեանց, իբրեւ տկար անօթոյ խնամ տանել կանանց ... զի դիւրաւ բեկանի եւ հեղու, որ ի նմա գինի կամ իւղ վնաս փոխանակ շահու կրեմք ի նմանէ[15]:

Պսակի արարողութեան ժամանակ նորապսակներին խրատում էին թէ՛ ծնողները, թէ՛ քահանան, այսինքն՝ նրանց դերն էր նաեւ խրատների միջոցով երիտասարդներին նախապատրաստել նոր կեանք մտնելուն:

Օրինակ՝ «Հանդերձօրհնէքի» արարողութեան ժամանակ ընթերցւում էին Պետրոս առաքեալի խօսքերը.

Նոյնպէս եւ կանայք հնազանդ լինին արանց իւրեանց, զի եթէ են ոմանք ապստամբք 'ի բանէ անտի յաղագս կանանց գնացից՝ առանց բանին իսկ շահեսցին: Դիտել երկիւղիւ զձեր պարկեշտ գնացս: Որոց լինիցի ո՛չ արտաքուստ հիւսիւք, եւ ոսկեհուռ ծամակալօք, կամ պաճուճեալ զգեստուք զարդ: Այլ ծածուկ սրտին մարդն. անեղծութեամբ հեզութեան՝ եւ հանդարտութեան հոգւոյն, որ է առաջի Աստուծոյ բազմապատիկ[16]:

Խրատի իմաստն է, որ պէտք է զարդարուած լինել ոչ միայն արտաքնապէս, այլեւ հոգեպէս ու բարոյապէս, ներքուստ լինել շքեղ ու զարդարուն:

Պսակի իւրաքանչիւր արարողութեան ժամանակ Մաշտոց ծիսական ժողովածոյից ընթերցւում է համապատասխան խրատ:

Կրօնական բնոյթի խրատները, կարծում ենք, ի սկզբանէ ունեցել են աշխարհիկ բնոյթ: Դրանց վկայութիւնն ու մեկնութիւնը մենք կարող ենք տեսնել շատ

15 ՄՄ, ձեռ. թիւ 5568, Մաշտոց ձեռաց, 1426 թ., Ցեղէվանք (Բերկրի գաւառ), էջ 108ա-112ա:

16 Մաշտոց, Վենետիկ, 1831, էջ 56:

ձեռագրերում: Սակայն կան Մաշտոցներ[17], որոնցում գրիչները յաւելել են լրացուցիչ նիւթեր:

Բուն պսակի ժամանակ քահանան խրատում է նորապսակներին՝ ասելով.

Այնքան մեծ է այս ամուսնութեանս խորհուրդ, մինչ զի առաքեալն Պօղոս նմանեցուցանէ զնա Քրիստոսի աստուածային փեսայութեանն եւ եկեղեցւոյ սուրբ եւ անապական հարսնութեանն, յասելն թէ՝ խորհուրդս այս մեծ է, բայց ես ասեմ ի Քրիստոս եւ յԵկեղեցի: Որ եւ այսու յայտ է, զի չէ հարկ, թէ ի վերայ աշխարհի այլ մեծագոյն սէր լիցի, քան զսէր առն եւ կնոջն (Եփես. Ե. 32):

Սա մի խրատ է, որ դարերի պատմութիւն ունի. ի սկզբանէ ձեւաւորուել եւ մեզ է հասել քրիստոնէական բարոյախօսութեամբ. աշխարհի վրայ չկայ աւելի մեծ սէր, քան հարսի ու փեսայի սէրը.

Եւ այս պատճառիւ էր, որ բարերարն Աստուած զկինն ոչ ստեղծ յատուկ ի հողոյ, այլ արար ի կողէ եւ յոսկերացն Ադամայ, որպէսզի այրն մի իբրեւ օտար ոք հայիցի ի նա, այլ հայիցի եւ սիրիցէ որպէս զիւր մարմինն (հմմտ. Ծննդ. Բ. 21):

Եթէ հարկ լինի, տղամարդը պէտք է թողնի իր հօրն ու մօրը, բայց ոչ կնոջը, ինչպէս յիշատակւում է Աստուածաշնչում (տե՛ս Ծննդ. Բ. 24):

Եւ այդ միութիւնը պէտք է լինի անքակտելի ու կատարեալ, ինչպէս Պօղոս առաքեալն է ասել. Ա՛րք, սիրեցէք զկանայս ձեր որպէս զմարմինս ձեր, եւ թէ այնպէս սիրեցէ՛ք, որպէս Քրիստոս սիրեաց զեկեղեցի, եւ զանձն իւր մատնեաց վասն նորա (տե՛ս Եփես Ե. 25): *Այսինքն՝ պատրաստ լինել անգամ զոհաբերութեան՝ յանուն մեծ սիրոյ:*

Ինչպէս տեսնում ենք, խրատների համար աղբիւր է հանդիսացել նաեւ Աստուածաշունչը, որի ընթերցուածները եկե-

17 ՄՄ, ձեռ. թիւ 5216, Մաշտոց, ԺԵ դ., էջ 12բ-31բ:

ղեցում հնչում են Պսակի կարգի ժամանակ.

Որդեա՛կ, իմոյ իմաստութեան անսա՛, եւ իմոց բանից մատո՛ զունկն քո, զի պահեսցես զխորհուրդս բարեաց: Զշաւիղս ուղիղս արասցես ոտից քոց, եւ զճանապարհս քո ուղղեսցես: Մի՛ յաջ խոտորիցիս եւ մի՛ յահեակ, դարձո՛ զոտն քո ի ճանապարհէ չարէ: ...

Հեռի՛ արա ի նմանէ ճանապարհս քո եւ մի՛ մերձենար ի դրունս տանց նորա, զի մի՛ մատնեսցես օտարաց զկեանս քո եւ զստացուածս քո անողորմից: Զի մի՛ լցցին օտարք ի զօրութենէ քումմէ եւ մի՛ վաստակք քո ի տունս այլոց մտանիցեն եւ զղջասցիս յետոյ, յորժամ մաշիցին անդամք մարմնոյ քո, եւ ասիցես՝ թէ զիա՞րդ ատեցի զխրատ եւ ի յանդիմանութեանց խոտորեցաւ սիրտ իմ (Ընթերցուածս յԱռակաց, Ե. 1)[18]:

Քահանայի կողմից ասուած աստուածաշնչեան այս առակը կարծես ժողովրդական խրատ լինի՝ ուղղուած փեսային: Եւ խրատը ոչ թէ պարզապէս ասւում է, այլ ասուածի մէջ կայ ե՛ւ յորդոր, ե՛ւ պահանջ ու պարտադրանք:

Մաշտոցներում շատ են խրատները, որոնք ունեն նաեւ աշխարհիկ բնոյթ:

Քահանան նորապսակներին խրատում է նաեւ «Պսակ վերացուցանելոյ»-ի ծէսի ժամանակ.

... Բարւոք է մարդոյ 'ի կին մարդ չմերձենալ, բայց վասն պոռնկութեան իւրաքանչիւր ոք զիւր կին կալցի, եւ իւրաքանչիւր ոք կին՝ զիւր այր կալցի: Կնոջ՝ այր իւր զպարտսն հատուսցէ, նոյնպէս եւ կինն՝ առն իւրում: Զի կին մարմնոյ իւրում ո՛չ իշխէ, այլ այրն: Նոյնպէս եւ այրն իւրում մարմնոյ ո՛չ իշխէ, այլ կինն ... (Պօղոսի առաքելոյն ի կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս (Է. 1):

Քահանան, խրատելով թագաւորին, յատկապէս պատուիրում է չորեքմուտքի, ուրբաթմուտքի եւ կիրակմուտքի երեկոնե-

18 *Մաշտոց*, Վենետիկ, 1831, էջ 69:

րին եւ ամբողջ Մեծ Պասին հեռու մնալ առագաստից, իսկ ծննդաբերութիւնից առաջ եւ յետոյ պէտք է քառասունք պահել.

...Եւ որ այս աւուրքս պսակ դնէ, ընդ անիծեօք է Գ. ժողովոյն եւ հակառակ Աստուծոյ[19]:

Մեծ է քահանայի դերը որպէս խրատատու նաեւ Երկրորդ պսակի ժամանակ, այսինքն՝ երբ ամուսնանում են երկրորդ անգամ.

...Բայց ամուրեացն եւ այրեացն ասեմ. լա՛ւ է նոցա, թէ կացեն իբրեւ զիս: Ապա թէ ո՛չ ունիցին ժոյժ, ամուսնասցին, զի լաւ է ամուսնանալ, քան զջեռնուլ... (Պօղոսի առաքելոյն ի կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս (Է. 1):

Ձեռագրերում ուշագրաւ են այն խրատները, որոնք կոչւում են «Ձեռնազինահար»:

Վենետիկի 1269 ձեռագիր Մաշտոցում[20] կայ «Խրատ փեսային եւ հարսին, որ է Ձեռնազինահար[21]». այն ունի եօթ գլուխ. «Առաջին՝ այս է աստուածադիր սահման...: Է. Եւթն՝ այս է պատուիրանն, որ լաւ գիտացէք...»: Առանց նոր վերնագրի սա մտնում է Պսակի մէջ:

Սակայն ուսումնասիրութիւններից պարզւում է, որ ձեռագրերում հանդիպում ենք այդ նիւթին, որը նոյն խրատն է, բայց չի կոչւում «Ձեռնազինահար», այլ «Խրատ փեսային եւ հարսին»[22], իսկ մէկ այլ ձե-

19 ՄՄ, ձեռ. թիւ 5894, Կանոնգիրք, 1664 թ., Ղրիմ, էջ 290ա:

20 *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ*, ձեռ. թիւ1269, Մաշտոց, 1673 թ., հտ. Գ, Վենետիկ, 1966, էջ 513:

21 Ձեռնազինահար. այս բառը բառարաններում չենք հանդիպել. կայ զինահար ձևը, որը պարսկերէն նշանակում է՝ 1. անձնատուր լինել, 2. ուխտ, դաշինք. միջնադարում գործածուել է նաև՝ ողորմի՛ր, խնայի՛ր, քեզ եմ ապաւինում: Ունի նաև իրանական ծագում և նշանակել է «կեանքի պահպանութիւն»: Տե՛ս Հր. Աճառեան, *Հայերէն արմատական բառարան*, հտ. Բ, Եր., 1973, էջ 95:

22 ՄՄ, ձեռ. թիւ 3427, Մաշտոց ձեռաց, 1566 թ., Խանցք գիւղ (Խաչէն):

© National Library of Armenia

ռագրում՝ «Քարոզ հարսանեաց»[23]: Ահա այդ խրատից մի հատուած.

Փեսայ եւ հարս խրատս եւ քարոզս (10բ-13բ)

Վասն ձեր է միտք ի վերայ կալէք եւ լսեցէք եւ ի միտք պահեցէք: Առաջի Աստուծոյ եւ առաջի այս ժողովրդեանս եւ առաջի քահանայից, զինչ որ Աստուծոյ հրամանն եւ օրէնքն է ի մէջ մարդոյ եւ կնոջն կայ, այսօր ձեզ յայտնի կու առնեմ, քանի որ կենդանի էք, ձեզ պահած կու պիտի: Թէ ի միտ առնէք եւ պահէք, յԱստուծոյ աւրհնեալ ծառայ լինիք պպտուիրանացն պահող եւ հրամանացն կատարող, այնժամ աւրհնած պտուղ լինիք եւ արքայութեանն ժառանգ...

Առաջինն այն է, որ աստուածադիր սահման է, որ **տարին կէսն պահք է եւ կէսն՝ ուտիք: Ի պահոցն զանկողինս ձեր սուրբ պահեցէք:** Հրաման չկայ ի պահոցն յանկողինք հեշտանալոյ, որպէս իր արգելում է ի մսոյ եւ այլ ուտեաց կերակրոյ, նոյնպէս արգելումն է անկողնոյ: Քրիստոնայն այն է, որ ի պահոցն յանկողնոյ հեռի կայ ու թէ չե կենայ, թուրքի կարգի է. առաջինն այս է:

Երկուքն այս է. **Եղբա՛յր, որի յաշխարհս զինչ կինարմատ որ կայ, այն մին է քո բաժինն, յայտ մինտ հասաւ:** Ցայտիցի զատտ, զինչ որ կին կայ, յաշխարհս ամէն քո մայր է ու քո քոյր է ու քո սանամայր է, քանի որ այդ կինտ կենդանի է, քանի որ այլ ճար չկայ, քո կին այդ է: Թէ աւելիք առնես ու լրբութիւն առնես ու օտար կնոջ թամահ առնես, հետ ի քո մօրն, հետ ի քո քվերն ու հետ ի քո սանամօրն լինիս մեղանչել:

Ու դո՛ւ այլ լսէ, հա՛րսն: Ի յաշխարհիս վերայ զինչ մարդ որ կայ, յայն է քեզ բաժին, այտ մինտ հասաւ, յայտից ի զատ զինչ մարդ կայ յաշխարհս, ամէն քո հայր են եւ քո եղբայր են եւ քո որդէգիր են, թէ աւելիք առնես, հետ ի քո հօր եւ հետ ի քո եղբօր մեղանչել, քանի որ կեն[դ]անի էք, յայլ կողմանց ճար չկայ, ապա թէ մինտ մեռանի, ապա թէ մին այլ հասանի. երկուք այտ է:

Սա կարող է համարուել ե՛ւ ուխտ, դաշինք քահանայի (որը համարւում է միջնորդ) ու ամուսնացող զոյգի միջեւ, ե՛ւ կեանքի պահպանութիւն, քանի որ քահանան, միացնելով մեկմեկու ձեռքերը, դրանով կապում է նաեւ նրանց սրտերը, այսինքն՝ զոյգերը միմեանց հետ կապւում են կեանքով.

Եւ այս է քրիստոնէից օրէնքն, որ Աստուած հրամայել է: Զայս, որ [աս]ացի, որ լսեցիք, օրէնքն այս է. թէ առնէք ու պահէք, ես այլ լինիմ յԱստուծոյ բացերես, որ զձեզ ուսուցի ու դուք, այլ որ ուսայք ու այտով կու տեսնու մարդ զԱստուած ու զարքայութիւն: Ու թէ չլսէք ու չպահէք, ես ազատեա՛ ի պարտուց, Աստուած զձեր մեղքն յիսնէ չխնդրէ: Այլ բան այլ չկայ, լա՛ւ գիտացիր, եղբա՛յր, որ մինչեւ ի մահէ ձեր վաճառդ:

3. Հարսանեկան ծէսում անմասն չեն նաեւ ժողովրդական խրատները:

«Հարսնառի» ժամանակ՝ հարսին հրաժեշտ տալիս, ընկերուհիները հագցնում են հարսի շորերը, մեղմ ձայնով երգում եւ նրան գովերգում են: Սովորոյթի համաձայն՝ հարսի մայրը մօտենում է եւ վերջին անգամ խրատում է աղջկան հայրական տանը.

Խի՞ ես լաց ըլում, ո՞ր աղջիկն ա իր հօր տանը մնացել, որ դու մնաս: Մի բուռ մոխիր ես՝ ուրիշին ենք տալիս, պէտք ա գնաս, ջուրն ենք քցում՝ պէտք ա սուս կենաս, ընկնես. կրակն ենք քցում, պէտք ա աչքերդ խփես, մէջն ընկնես: Վախել մի, քո հէրն ու մէրը անջիգար չեն, քեզ ո՛չ ջուրը կը քցեն, ո՛չ կրակը:

Բալա՛ ջան, ուր էլ ըլիս, մօրդ կաթը մտահան չանես: Քեզ պահել եմ, ցրտից ու կրակից ազատել, թէ տան միջին՝ կտրի տակին, թէ աչքիցս հեռու՝ թէ աչքիս աղաքին հազար մի խրատներ եմ տուել, օրհնանք ու անէծք ասել. ա՜յ որդի, անէծքս ջուրը տանի, օրհնանքս գլ-

23 ՄՄ, ձեռ. թիւ 10882, Ժողովածոյ, 1644 թ., Շատախ (Գանձակ):

խիդ գեօլ տայ: Ղամի ըռեխը տան, սրի ծէրովը ծակոտեն, գլխիդ մոխիր մաղեն՝ անունդ չկոտրես, միշտ հալալ կաթնակեր մնաս[24]:

Մինչեւ աղջկան տնից դուրս հանելը, նրան խրատական իր խօսքն է ասում նաեւ հայրը.

Բալա՛ ջան, իմ ամակը (երախտիքը) չմոռանաս, հօրդ օճախին խէթ աչքով չմտիկ տաս: Աստուած քեզ ջուխտ ձեռքով քու տիրունջը բաշխի: Հիմիկանց դէնը քու տէրը առաջ Աստօծն ա, եդնա այս ինչը (փեսայի հայրը)[25]:

Աղջկան ուղղուած այս խրատը հայրն ասում է հրապարակայնօրէն՝ ի լուր բոլորի (ի տարբերութիւն մօր):

Աղջկան հօր տանից խրատով ճանապարհելը, որը պարտադիր պայման է եղել, մատնանշում է ծնողների խիստ դաստիարակութիւնը.

Աստուած հետդ ըլի, կերսարոջդ ու կեսուրիդ հնազանդ էղի, պատուէ ատոնց, մարդուդ հաւատարիմ կեցի[26]:

Ծնողների կարեւոր պարտականութիւններից մէկն էլ հէնց զաւակներին դաստիարակելն էր: Կանոնական նորմերը դաստիարակելն էր: Կանոնական նորմերը պարտաւորեցնում էին ծնողներին՝ զաւակներին դաստիարակել թէ՛ հոգեւոր (Աստծու նկատմամբ հաւատ, երկիւղածութիւն, հոգեւոր զանազան պարտականութիւններ) եւ թէ՛ ֆիզիկական առումով (եթէ աղջիկ է, ապա պէտք է կարողանայ կարել, գործել, տան աշխատանքներում օգնել, իսկ տղան պէտք է օգնի հօրը դրսի գործերում, դաշտում): Ծնողների այդ պարտականութիւնն անգամ տեղ է գտել եկեղեցական ու կանոնական նորմերում: Բարսեղի «Վասն պէսպէս...» կանոնախմբի ՃԳ կանոնում ասւում է.

Ծնաւղք որ զորդիս իւրեանց ակնառութեամբ սիրեն եւ ոչ խրատեն երկիւղիւն Աստուծոյ՝ նզովեալ եղիցին[27]:

Քիչ չեն այն խրատները, որոնք ունեն նախաքրիստոնէական հիմքեր:

Եղել են նաեւ հնագոյն շրջաններից հասած բանաւոր խրատներ, որոնք պարզապէս յիշատակուել են յետագայ դարերում: Զեռագրերից մէկում, որը միջնադարեան մի խրատ է, ասւում է.

...Զի էութիւն պսակին Գ. է. Մէկ այն է, որ հարսն ու փեսայն տեսնուն իրար եւ հաւանին միմեանց, եւ Բ. այն է, որ նշան դնեն հարսինն: Եւ Գ. այն, որ ի դուռն եկեղեցւոյն առաջի բազմաց հարցանէ քահանայն եւ յանձնէ զհարսն ի փեսայն:

Այսինքն՝ այս երեք նախապայմանն անհրաժեշտ էր, որպէսզի կատարուէր Պսակի արարողութիւնը, որի ժամանակ նրանք պէտք է մէկ մարմին դառնային.

Եւ նոքա, հաւանեալ միմեանց, տէր կենան, յապըսպարելն եւ ապա մտանեն յեկեղեցին եւ աւրինութեան պսակին արժանաւորին եւ միանան ըստ այնմ, թէ եղիցին երկոքեանն ի մարմին մի: Զի եկեղեցին է որպէս քուրայ դարբնի, եւ բեմբն՝ իբր զսալ, եւ քահանայ՝ որպէս դարբին, դնէ զգլուխ հարսինն եւ զփեսային ի վերայ բեմբին՝ իբր ի վերայ սալի, եւ զսուրբ խաչն եւ զԱւետարանն՝ որպէս կուռն, ի վերայ գլխոց նոցա եւ արասցէ զնոսա մի անմեկնելի ըստ այնմ, թէ զոր Աստուած զուգեաց, մարդ մի մեկնեսցէ: Եւ որք անտես ի միմեանց պսակին, անհաճ եւ անհաւան, բազում վնաս լինին ի մէջ նոցա եւ ատեն զմիմեանս[28]:

Այս խրատի մէկ այլ տարբերակի՝ Վենետիկի 1735 ձեռագիր Մաշտոցի (1727 թ.) մասին մենք արդէն յիշատակել ենք[29]:

24 Ե. Լալայեան, *Գանձակի գաւառ*,- «Ազգագրական հանդէս», Զ գիրք, Թիֆլիս, 1900, էջ 255:

25 Նոյն տեղում, էջ 256:

26 Ե. Լալայեան, *Զաւախք*,- «Ազգագրական հանդէս», Ա գիրք, Շուշի, 1896, էջ 252:

27 *Կանոնագիրք Հայոց*, «Բասղի Գիր կանոնական վասն պէսպէս եւ բիւրապատիկ ախտից», հտ. Բ, աշխ.՝ Վ. Յակոբեանի, Եր., 1971, էջ 126:

28 ՄՄ, ձեռ. թիւ 2782, Ժողովածոյ, ԺԵ. դ., էջ 7բ:

29 Ա. Մխիթարեան, *Հարսանիքի եկեղեցական ու ժողովրդական ծիսական արարողութիւնների*

© National Library of Armenia

Շատ յաճախ խրատները, որոնք չեն կարող կանոնաիրաւական ուժ ունենալ, հանդէս են գալիս որպէս աստուածային օրէնք.

Զայս ուսուցանեն աստուածային աւրէնքն. «Ոչ մերձենալ ի կինն, յորժամ յապահարսն[30] լինի», այսինքն՝ յորժամ ի կանանց աւրինի իցէ կինն, մի՛ մերձեսցի ի նա այր իւր[31]:

Օրինակ՝ Երզնկացին այս խրատը մեկնում է հետեւեալ կերպ.

Եւ զի՞նչ է պատճառն:

Զոր աւրինակ, մշակ ոչ սերմանէ ի ճախճախուտ վայր զսերմն, զի մի նուազեցուցել ողողեսցի: Այսպէս զաւրինակ՝ անդաստանի բերէ անձն կնոջն եւ այր զմշակի, եթէ յայնր ժամանակի մերձաւորի անպտուղ լինի, եւ թէ սաղմ առ ի խառնեալ ընդ իրար, ապականէ զգաղափար մանկանն ի զանազան ախտ՝ յուրկութիւն, որ է գոդութիւն, ի պիսակոտութիւն, ի դիւահարութիւն եւ յայլ գարշելի եւ անբժշկելի ցաւս...[32]:

Պատահական չէ, որ տղամարդը նոյնանում է սերմանող մշակի հետ, իսկ հողը, ինչպէս գիտենք, երկրագործ ժողովրդի մօտ համարուել է մայր: Սա հէնց հնագոյն արարման ծէսն է, ինչպէս օրինակ՝ երկրագործական պաշտամունքային ծէսերը՝ գարնան ցանքի սկիզբը, սերմի, հատի օրհնութիւնը եւ «Անդաստան» կոչուող ծէսը: Այսինքն՝ ինչպէս բնութեան մէջ կայ որոշակի ժամանակ եւ պայման՝ սերմը հողի մէջ գցելու, այնպէս էլ կեանքում՝ պտղաբերութեան համար: Իսկ եթէ դա չլինի ճիշտ ժամանակին, ապա «եթէ յայնր ժամանակի մերձաւորի, անպտուղ լինի»:

Ըստ հեթանոսական սովորութեան՝ շաբաթուայ երեք օրը՝ լոյս չորեքշաբթի, ուրբաթ եւ կիրակի, առագաստ մտնելն արգելուած է եղել, եւ դա դրսեւորւում է նաեւ գութաներգերում.

... Զուապ տարէք խազնատարին,
Տեղին պարկող կիրակմտին,
Ճիժ վաստկող ուրբթմտին,
Գիրկ դրեց հորեւորին[33]:

Յետագայում քրիստոնէութիւնը շատ ծէսերի ու ծիսական սովորոյթների նման պահպանեց նաեւ հնագոյն այս սովորոյթը՝ վերագրելով քրիստոնէութեանը, համաձայն որի՝ Պասկի խորհուրդը եկեղեցում պէտք է կատարուէր միայն թոյլատրուած օրերին, քանի որ կային նաեւ արգելուած օրեր՝ տարուայ բոլոր կիրակի օրերն առանց բացառութեան, իւրաքանչիւր չորեքշաբթի եւ ուրբաթ օրերը[34], Սբ. Ծննդեան, Անուանակոչութեան, Տեառընդառաջի, Աւետեաց եւ Համբարձման օրերը եւ այդ տաղաւար տօների մեռելոցի օրերը, ամբողջ Մեծ Պահք եւ Զատիկի առաջին ութ օրերը, այսինքն՝ Բուն Բարեկենդանից մինչեւ Նոր Կիրակի ներառեալ, Առաջաւորաց, Վարդավառի, Ս. Աստուածածնի, Խաչվերացի եւ Ս. Ծննդեան շաբաթապահոց հինգ օրերը[35]:

Եկեղեցին դէմ էր նաեւ ցոփ ու գինարբուքներով լի պսակի արարողութեանը: Յովհան Ոսկեբերանը, այդ մասին յիշատակելով, խրատում էր, որ պսակը եւ հարսանիքը հանդարտութեամբ կատարէին.

Սովորութիւն է աշխարհականաց երաժշտութեանց փողով եւ քնարաւ եւ նոյն նմանեօք զուարճացուցանել զերգասիրաց զմարդկան

փոխառնչութիւնները,- Հայ ժողովրդական մշակոյթ, XV, Եր., 2010, էջ 376:

30 Ապահար. նոյնն է, ինչ ապարահ. դաշտան. կին ախտացեալ բղխմամբ աւելորդ արեան՝ ամսոյ յամիս: Տե՛ս *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, հտ. Ա, Եր., 1979, էջ 274:

31 Է. Մ. Բաղդասարեան, *Յովհաննէս Երզնկացին և նրա խրատական արձակը*, էջ 156:

32 Նոյն տեղում:

33 Ս. Հայկունի, *Էմինեան ազգագրական ժողովածոյ*, Ալաշկերտ, հտ. Զ, Մոսկուա-Վաղարշապատ, 1906, էջ 136:

34 Ե. Լալայեան, *Զաւախք*, էջ 241:

35 Դերենիկ եպս. Փոլադեան, *Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցւոյ խորհուրդները*, Պէյրութ, 1957, էջ 94:

միտս. նոյնպէս եւ հարսանիք փողովք համեմատեալ յարդարին... Բայց եկեղեցական համաձայնութեանն գոհութիւն ոչ համաձայնէ այնոցիկ, թէպէտ եւ մի իցեն յերկաքանչիւրսն փողոյն եւ քնարին անուն[36]:

Խրատները դրսեւորւում են նաեւ աղօթքներում, այսինքն՝ քահանան, խօսքն ուղղելով առ Աստուած, այն լսելի է դարձնում նորապսակներին.

Տո՛ւր, Տէ՛ր, սոցա, որք առին զպսակ վաչելչութեան ի գլուխս իւրեանց՝ առանց քայթակղութեան հասանել ի հանդերձեալ օր՝ անամաղութեան հասանել ի հանդերձեալ օր՝ անամաղութեամբ, անախտք, ամբիծք, անասայթաք, անկոուելիք յաներեւոյթիցն, հոգով եւ մարմնով քեզ ծառայել[37]:

Թէ՛ աղօթքը եւ թէ՛ խրատը, ունենալով հմայական ներգործութիւն եւ իրագործման ցանկութիւն (որի զօրութեանը հաւատում է ե՛ւ ասողը, ե՛ւ լսողը), ի կատար են ածւում: Եւ հմայական զօրութեամբ արտայայտուած այդ խօսքերում կան հաստատուն ամուսնութեան, ամուր ընտանիք պահելու, սերնդաճի ապահովման եւ ուրիշ այլ գաղափարներ:

Խրատները, լայն կիրառութիւն ունենալով թէ՛ գրականութեան մէջ (յատկապէս միջնադարում՝ խրատական բովանդակութիւն ունեցող ճառեր, քարոզներ, կանոններ, աղօթքներ եւ այլն) եւ թէ՛ առօրեայում, հասել են մինչեւ մեր օրերը: Առօրեայում կիրառուող խրատները ժողովրդական իմաստութիւնը, դարաւոր փորձն ու իմացութիւնը սերունդներին փոխանցելու բանաձեւն են, որոնք դառնում են խորհուրդ ու պատուիրան (երբեմն նաեւ օրէնքի ուժ են ստանում): Միայն թէ ներկայումս այդ խրատներն այլ բովանդակութիւն ունեն:

36 Յովհաննու Ոսկեբերանի *Մեկնութիւն թղթոցն Պաւղոսի*, հտ. II, Վենետիկ, 1862, էջ 854:

37 ՄՄ, ձեռ. թիւ 8406, Մաշտոց ձեռաց, ԺԷ, ԺԸ դդ., Նախիջևան, էջ 20բ-21ա:

© National Library of Armenia